

Վիշապ գորգերուն մէջ: Ես համամիտ չեմ այս քիչ մը շատ եւ միայն երեւակա-
յութեամբ յեղյեղուած տեսականին. պիտի
ցոյց տամ իմ համոզումներու աղբիւր-
ները եւ փաստերը, մանաւանդ ցոյց պիտի
տամ թէ Վիշապին գոյութիւնը ի Հայս,
գրեթէ նախահայկական եւ նախապատ-
մական շրջաններուն իսկ գոյութիւն ունէր՝
այժմ Հայաստան կոչուած այս հողամա-
սին վրայ: Անշուշտ կարելի է խնդրոյ
նիւթ ընել Վիշապին բուն նախահայրե-
նիքը, եւ սակայն դժուար թէ կարենանք
առ այժմ այդքան ետ երթալ, եւ հազա-
րաւոր տարիներու հնութիւնը թօթափելով
ըսել թէ Վիշապը մեր հողամասին մէջ
ներմուծուած է Չինաստանէն կամ կեղոս-
նական Ասիայէն: Վիշապը գաղափար մըն
է, տեսակէտի մը մարմնացումը, կատա-
րուած կրօնից շնորհիւ. այդ պայման-
ներուն տակ դժուար է անոր բնաշխարհը
ցոյց տալ: Իսկ ներկայիս անոր ինքնու-
թեան ճշդումը իր նիւթական գծերուն մէջ
նկատի չեմ առնել քանի որ ան ուրիշ
ուսումնասիրութեան նիւթ կը կազմէ:

Վիշապին որոշ պատմական գոյութիւնը
ի Հայաստան Քրիստոսէ 714 տարի առաջ
փաստացիօրէն կը յիշուի, ցուցնելով անոր
զիրքը, արժէքը եւ պաշտօնը: Այս թուա-
կանին Ասորեստանի Սարգոն արքան եկաւ
Ուրարտուի վրայ, ուրկէ ձեռք անցուցած
թանկագին եւ ձոխ աւարին ցանկը քան-
դակեց բեւեռագիր. այդ ցանկին մէջ կը
կարդանք թէ, բազմատեսակ աւարին կար-
գին կար նաեւ «ոսկեծոյլ կերպը Ապու-
պուի (abubu) կամ ջրհեղեղի-վիշապին,
մարդու ձեռքի մը վրայ նստած, ասիկա
կը փակէր գուռը, ուրիշ երկու ոսկի բա-
նալիններու հետ, որոնք Հիթիթ աստուա-
ծուհիներու զլրու պահպանակներուն պէս
ձուլուած էին: Տաճարէն առնուած ուրիշ
աւարներու հետ միասին կային նաեւ 12
արծաթ վահաններ զարդարուած առիւծի
եւ վայրի ցուլի գլուխներով, նաեւ Ապու-
պուով»¹: Նախ աւելցնեմ որ գրաւուած
տաճարը Խալտիսի տաճարն էր: Խալտիս
իգական գերագոյն աստուածուհին, մայ-

րութեան, բեղմնաւորութեան, զգաստու-
թեան, շատ ու շատ կը նմանի Անահի-
տին, եւ անտարակոյս պէտք է զանոնք
նոյնացընել: Այս վերջին կէտը կը խըն-
դրեմ որ լաւ պահուի յիշողութեան մէջ:
12 արծաթ վահաններուն վրայ կար ցուլ՝
ուծի, առնականութեան մարմնացումը որ
Խալտիսի տաճարին նման Անահտայ տա-
ճարին ալ զարգն էր: Անահիտ, ոսկեծոյլ,
ոսկեմօր, թէեւ կոյս, բեղմնաւորութեան
աստուածուհիին՝ ճակատին կոնաձեւ խա-
րանուած ցուլեր կը զոհարեցուէին, ասիկա
է յիշուած միակ կենդանիի, եւ արիւնի
զոհարեցուցումը որ նուիրուած է այդ աս-
տուածուհիին, որ մինչեւ Քրիստոսի Գ
դարը շարունակուեցաւ Էկեղեցայ գաւառի
Երիզայի Անահտական մեհեաններուն, եւ
անկէ վերջ ալ Քրիստոնէութեան մէջ այդ
զոհարեցական սովորոքիսն եւ անոր իս-
կութիւնը աղաւաղուելով իր հետքը թու-
ղուց մատաղին մէջ:

Վահաններուն վրայի Աուուր Արիական
էր: Գալով Վիշապին «Չինական ջրհե-
ղեղի-վիշապին համանաւասար կերպաւոր-
ութիւն մը» էր եւ ոչ թէ Չինական ջրհե-
ղեղի վիշապը:

Դառնալով պատմականին կը տեսնեմ
թէ Խորենացին ունի նշանակալից «ի Տա-
ճարին Վիշապաց», Արգաւանի ճաշի եր-
գին մէջ, որ բառ իս Խալտիսի տաճարին
կ'ակնարկէ ուր կարելի էր մտնել Վիշա-
պագարդ բանալիներով, նաեւ ուր վահան-
ները զարդարուած էին Վիշապով: Վիշա-
պը ջուրի, արգասաւորութեան, բեղնա-
ւորութեան, որով մայրութեան օժանդակ
աստուածութիւն մըն էր, անոր մայրու-
թեան տաճարին դռները բացող, գայն իր
վահանով պաշտպանող, օժանդակող: Ես
միայն Խորենացոյ մօտ հանդիպած եմ,
ուր՝ այս բզիկ բզիկ եղած մատենագիրը՝
ստէպ կը յիշէ Աժդահակը, աւելցնելով
որ «Աժդահակ ի մեր լեզու է Վիշապ»²:

1. Իմ. Բազմակէպ 1928 էջ 283, Վանի Թագաւորու-
թիւնը. Թարգ. Անգլ.
2. Խորենացի, Գ. Ա. զԷ. 1.